ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7

«ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/85» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով թվով 101 դպրոցների մարզագույքի գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան **13.07.2026թ**

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Մկրտչյան

Հանձնաժողովի անդամ՝ Արման Երանոսյան

Էլեն Ստեփանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

1. Գնման գործընթացը չկայացած հայտարարելու մասին.

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/85» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 17-րդ և 19-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից «Ամուրա» ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով՝ eauction.armeps.am համակարգի միջոցով 03.07.2026թ. ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծը, սակայն վերջինս «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում (2026 թվականի հուլիսի 10-ը ներառյալ) չի ներկայացրել 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ստորագրված պայմանագիրը, որակավորման ու պայմանագրի ապահովումները:

1.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը՝ «Ամուրա» ՍՊԸ-ին 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով զրկել պայմանագիր կնքելու իրավունքից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

1.3 Առաջնորդվելով սույն արձանագրության 1.2 կետով և ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 58-րդ կետով, գնման ընթացակարգը 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա, պայմանագիր չկնքելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

1.4 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը պատվիրատուի ղեկավարին ներկայացնել «Ամուրա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշման նախագիծ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Հրանտ Մկրտչյան

_____ Արման Երանոսյան

_____ Էլեն Ստեփանյան

_____ Արսեն Սողոմոնյան /քարտուղար/